Քաղվածք

«ԱԳՐՈՎԻԺՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

(կազմված է 29.06.2026թ. բաղկացած է 2 էջից)

29.06.2026թ. ք. Երևան, Ազատության 1/21-40

«Ագրովիժն» ՓԲԸ-ի (Այսուհետ՝ **Ընկերություն**) Ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է վերջինիս միակ բաժնետեր «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը:

Ժողովը համարվեց իրավազոր և սկսեց իր աշխատանքները:

Ժողովի նախագահ ընտրվեց Գագիկ Սարդարյանը, իսկ քարտուղար՝ Ռուզաննա Բաղդասարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

2. ***Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալու հարցը:***
3. ***Ընկերության ներքին տեղեկությունների գաղտնիության պահպանման, դրանց բացահայտման և ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից՝ ընկերության կողմից թողարկված արժեթղթերով գործարքներ կնքելու գործընթացը կարգավորող ներքին կանոնակարգի հաստատումը,***
4. ***Ընկերության խորհրդի կանոնակարգը հաստատելու հարցը:***

Ժողովի նախագահ Գագիկ Սարդարյանը ներկայացրեց օրակարգի հարցերը:

Քննարկումներից հետո Ժողովն անցավ քվեարկության:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ քվեարկության արդյունքները.

Կողմ	**100%**
Դեմ	0
Ձեռնպահ	0
Անվավեր	0

Ամփոփելով քվեարկության արդյունքները՝ Ժողովը միաձայն որոշեց.

1. ***Միանալ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հուլիսի 30-ի N 1955-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին:***
2. ***Ընկերության տնօրենին հանձնարարել՝ մշակել և Ընկերության խորհրդի հաստատմանը ներկայացնել Ընկերությունում կորպորատիվ կառավարման ներդրման և կիրարկման հարցերը կարգավորող համապատասխան ներքին ակտեր:***
3. ***Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:***

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ քվեարկության արդյունքները.

Կողմ	100%
Դեմ	0
Ձեռնպահ	0
Անվավեր	0

Ամփոփելով քվեարկության արդյունքները՝ Ժողովը միաձայն որոշեց.

Հաստատել Ընկերության ներքին տեղեկությունների գաղտնիության պահպանման, դրանց բացահայտման և ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից՝ ընկերության կողմից թողարկված արժեթղթերով գործարքներ կնքելու գործընթացը կարգավորող ներքին կանոնակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ քվեարկության արդյունքները.

Կողմ	100%
Դեմ	0
Ձեռնպահ	0
Անվավեր	0

Ամփոփելով քվեարկության արդյունքները՝ Ժողովը միաձայն որոշեց.

Հաստատել Ընկերության խորհրդի կանոնակարգը:

Ժողովը արձանագրվել 29.06.2026թ. հայերեն լեզվով, ստորագրվել է ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

«ԱԳՐՈՎԻԺՆ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն _____ Նվարդ Անանյան

«АГРОВИЖН» «AGROVISION» 01555961